ԱՐԱՐԱՏ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԷՍԸ

ԿԱՐԻՆԷ ԱԻԵՏԵԱՆ

Ընկերային–տնտեսական աննպաստ պայմանների պատճառով հայ մշակոյթը մինչեւ անցեալ դարի 60–70ական թուականները զարգանում էր գերազանցապէս Հայաստանից դուրս, հայկական գաղթավայրերում։ Արեւելեան Հայաստանը Ռուսաստանին միացնելուց յետոյ, որին իր քաղաքական գործունէութեամբ այնքան նպաստել էր հայ բարձրաստիճան հոգեւորականութիւնը՝ ի դէմս Ներսէս Աշտարակեցու, Յովսէփ Արղութեանի, հայոց եկեղեցու իշխանութիւնը սահմանափակւում է նախ «Պոլոժենիէ»ով (1836 թ.)։ Եկեղեցուն վերապահուած՝ սկզբնական շրջանի ազգային, կրթական եւ մշակութային հարցերի լիակատար տնօրինութիւնը, որ փոքր խորամանկութիւն էր իշխանութիւնների կողմից եւ որի անհրաժեշտութիւնը 15–20 տարի յետոյ արդէն չկար, յետագայում շատ համարուեց, եւ 70ական թուականներից կառավարութիւնն սկսեց աստիճանաբար նեղացնել եկեղեցու իրաւասութեան շրջանակները։ Ռուսական կառավարող շրջաններն իրենք էլ լաւ էին հասկանում դարերով պետութիւն չունեցած մի ժողովրդի կեանքում եկեղեցու եւ կաթողիկոսի ունեցած դերը եւ ազդեցութիւնը։ Եւ ԺԸ. դարի վերջերին հայ կաթողիկոսներին իրենց հովանաւորութեամբ հրովարտակներ բաժանող ռուս ինքնակալները մէկ դար յետոյ արդէն աշխատում են զանազան պատրուակներով հնարաւոր չափով սահմանափակել եկեղեցու արտօնութիւնները։ Բայց, չնայած այդ խոչընդոտներին, մշակութային զարթօնքը թափանցեց Հայաստան։ Ինչպէս իրաւացիօրէն նշել են ուսումնասիրողները, «Դարակէսից, իսկ աւելի լայնօրէն՝ 1870ական թուականներից, կրթական ու մշակութային շարժումը թափանցեց հայկական գաւառները, Հայաստանից դուրս եղած մշակութային օջախներին զուգահեռ ու նրանց օժանդակութեամբ ստեղծուեցին ու աշխուժացան նոր օջախներ (Երեւան, Շուշի, Վան, Կարին)»[1]։ Նրանց մէջ առանձնայատուկ դեր ունէր Էջմիածինը, որ ամենայն հայոց հոգեւոր պետի՝ կաթողիկոսի նստավայր լինելով, նաեւ ինչ որ տեղ

վարչական (քաղաքական) ազգային իշխանութեան կենտրոն էր։ 1874 թուականին հիմնադրուեց Գէորգեան Ճեմարանը։ Էջմիածինը դարձաւ հայագիտութեան եւ հայ մշակոյթի նշանակալի կենտրոն։

Այս կենտրոնի տեւական գործունէութեան լաւագոյն արդիւնքներից մէկն էլ «Արարատ» ամսագիրն էր (1868–1919թթ.)։ Էջմիածնի կաթողիկոսների ջանքերով մինչ այդ ստեղծուել էր տպարան, ինչ որ չափով կարգաւորուել եւ կանոնաւորուել էր մատենադարանը, հիմնադրուել էր Ժառանգաւորաց դպրոցը։ Արդէն վաղուց հասունացել էր սեփական տպագիր պարբերական ունենալու գաղափարը։ Դեռեւս 1825 թուականին Ներսէս Ե. Աշտարակեցին մտադրուել էր հիմնադրելու մի հանդէս, որը պէտք է կոչուէր Տարեգրութիւն Հայոց Գրագիտական եւ որի նպատակն էր «չխօսիլ ամենեւին քաղաքական եւ առօրեայ անցքերու վրայ, այլ զուտ գիտնական բովանդակութիւն պիտի ունենար»[3]։ Սակայն սա եւս, բազմաթիւ այլ մտայղացումների նման, չիրականացաւ հայ ժողովրդի համար այնքան ճակատագրական քաղաքական դէպքերի պատճառով։

Շարունակելով իր նախորդների անաւարտ մնացած եւ չիրականացած գործերը, Գէորգ Դ. կաթողիկոսը «...Ժամանակի պահանջներին հպատակելով... կամեցաւ մի պաշտօնական բերան ստեղծել հայ եկեղեցու համար»։

Մամուլի պատմաբան Գարեգին Լեւոնեանի կարծիքով, Արարատի հրատարակութեան շարժառիթը Երուսաղէմի Ս. Յակոբեանց միաբանութեան Սիոն ամսագրի (տպ. 1866 թուից) գոյութեան փաստն էր։ Սակայն, երեւոյթն աւելի ճիշդ է գնահատել Մաղաքիա արքեպս. Օրմանեանը. «Էջմիածին տպարան ալ ունէր, բայց ան ալ խեղճ վիճակի մէջ էր...։ Գէորգ Էջմիածին հասնելուն առաջին օրէն զայն կատարելագործելու պէտքն զգաց, եւ Պետերբուրգ ուղեւորելուն առթիւ Մկրտիչ Սանասարեանի եւ Յովհաննէս Յովհաննեանի նուիրատուութիւններով նոր կազմածներ եւ գիրեր եւ պէտքեր հայթայթեց, եւ ի դարձին բաւական բարեկարգեց եւ ճոխացուց նախկին խեղճ տպարանը, որուն համար յատուկ յանձնաժողով մըն ալ հաստատեց։ Բայց պէտք էր արդիւնաւորութեան նշաններ ալ տալ, ուստի այդ նպատակով եւ միանգամայն Աթոռին մէջ ուսումնական շարժում յառաջ բերելու, եւ միաբաններն ալ եռանդի շարժելու համար որոշեց ամսագիրի մը հրատարակութեան ձեռնարկել, որուն Արարատ նուիրական անունը տրուեցաւ եւ, կաթողիկոսն ինքն իւր տնօրէնութեամբ առաջին թիւը ի լոյս ընծայեց 1868 Մայիսին, Պետերբուրգէ դառնալէ երեք ամիս ետքը։ Խմբագրութեան գլուխ նշանակելով Մխիթարեան Արէլ եպիսկոպոսը (ԱԲՂ. 55), եւ անոր ընկերակից նշանակելով ութը միաբաններ. եւ անոնցմէ դուրս թէ՛ աթոռը եւ թէ վիճակները գտնուող միաբաններուն առջեւ բանալով ամսագիրին էջերը (68 ԱՐՐ. 51), որուն ճակատը դրոշմուեցաւ՝

Աշխատասիրութիւն միաբանից Սուրբ Էջմիածնի»[3]։

Եւ այսպէս, 1868 թ. Մայիսից Էջմիածնում սկսեց հրատարակուել Արարատ ամսագիրը, որի տիտղոսաթերթը ծանուցում է. «ամսագիր կրօնական, պատմական, բանասիրական եւ բարոյական գիտելեաց», իսկ անդրանիկ պրակի առաջաբանի մէջ համառօտ ներկայացուում է հանդէսի ծրագիրը։ Ըստ այդ ծրագրի, «կրօնական» բաժնում պէտք է լինէին կաթողիկոսների գործեր, պատմիչների կենսագրութիւններ, նրանց երկերից հատուածներ, ձեռագրերի մասին տեղեկութիւններ, նկարագրութիւններ, «պատմական» բաժնում՝ Հայաստանի նահանգների, գաւառների, քաղաքների մասին աշխարհագրական տեղեկութիւններ, ուսումնասիրութիւններ՝ գրչութեան, մշակոյթի նախկին օջախների մասին, իսկ «բանասիրական» բաժնում՝ յօդուածներ, համբորդական նոթեր, նամակներ եւ այլն։ Յետագայում ամսագիրն այդ ծրագիրը մասնակի փոփոխութիւններով պահպանեց մինչեւ վերջ՝ 1919 թ.։

Արարատի հիմնադրումով Էջմիածինը, հոգեւոր կենտրոն մնալով, աստիճանաբար վերածուեց նաեւ գիտական կենտրոնի, իբրեւ այդպիսին՝ առաջինը լինելով Արեւելեան Հայաստանում։ Արարատը մինչեւ 1897 թուականը հրատարակւում էր բացառիկ արտօնեալ պայմաններում. այն միակ ամսագիրն էր, թերեւս ամբողջ կայսրութեան մէջ, որ գրաքննութեան չէր ենթարկւում։ Ամսագրի հիմնադիր Գէորգ Դ. կաթողիկոսի եւ կայսեր նախնական պայմանաւորուածութեամբ Արարատի գրաքննիչը կաթողիկոսն էր կամ Սինոդի նախագահը (եթէ կաթողիկոսական գահը թափուր լինէր)։ Շնորհուած արտօնութեան փոխարէն ցարական կառավարութիւնն ունէր այն ակնկալիքը, թէ կաթողիկոսի իշխանութիւնն ու հեղինակութիւնը, ինչպէս նաեւ Արարատ ամսագիրը ծառայելու են Արեւմտեան Հայաստանում եւ Ռուսաստանի տարածքում ապրող հայերի մէջ կայսրութեան ազդեցութիւնը տարածելուն եւ ամրապնդելուն։ Գրաքննութեան չենթարկուելը միշտ անհանգստացնում էր Կովկասի ռուս կառավարիչներին, յատկապէս քաղաքացիական մասի նոր նշանակուած (1897 թ.) գլխաւոր կառավարչապետ[4] իշխան Գ. Գոլիցինին, որն այդ առիթով ներքին գործերի նախարարին գրել է, թէ հրատարակութեան սկզբից եւեթ Արարատ ամսագիրը խիստ անհամապատասխան է գտնուել իր համար նախանշուած ուղղութեանը։ Ըստ նրա, առաջին իսկ համարում զետեղուած ծրագրից արդէն նկատելի էր, որ առանձին ուշադրութիւն է դարձուելու ամսագրի պատմա–աշխարհագրական բաժնին, որի միջոցով նախատեսւում էր հայերի մէջ արթնացել հայրենասիրական զգացմունքներ, նկարագրելով «ազգի եւ հայրենիքի պաշտպան նախնիների մեծ գործոց յիշատակարանները» եւ տպագրելով պատմական ակնարկներ, ինչպէս Արարատեան մարզի վերաբերեալ, ուր իրենց գահերն են հաստատել հայոց

թագաւորները, այնպէս էլ Հայաստանի այլ վայրերի մասին։ Գոլիցինը համոզուած էր, որ Արարատը չկարողացաւ օժանդակել հասնելու համար այն նպատակին, որը դրուել էր 1868 թուականին, ... այն է,— հայերի մերձեցումը ռուս ժողովրդի հետ։ Եւ, «Ելնելով վերոյիշեալ մտածումներից, այլեւ նկատի ունենալով, որ պրաւոսլաւ եկեղեցու բոլոր հոգեւոր պարբերական հրատարակութիւնները եւ նոյնիսկ թեմական տեղեկագրերը ենթակայ են պատասխանատու գրաքննութեան», Գոլիցինն անհիմն էր համարում այդ ուղղութեամբ բառառութիւն թոյլ տալն օտար դաւանութեան պատկանող հոգեւոր ամսագրին եւ վստահ էր, որ նոյնպիսի գրաքննութեան պէտք է ենթարկել Արարատ ամսագիրը»[5]։ Եւ ահա, 1897 թ. Օգոստոս ամսից մինչեւ 1905 թ. Հոկտեմբեր Արարատը հրատարակւում էր հանրածանօթ՝ «արտօնուած է գրաքննութեամբ» արտայայտութեամբ, որից յետոյ դարձեալ նախկին սկզբունքով՝ կաթողիկոսի վերահսկողութեամբ։ Սկզբնական շրջանում Արարատը «աշխատասիրութիւն միաբանից Ս. Էջմիածնի» էր, իսկ աւելի ուշ, արդէն 80—90ական թուականներից աշխատակցելու էին հրաւիրւում «Ճեմարանի ուսուցչական խումբն եւ ազգիս մէջ ամէնուրեք գտանուող բանասէր գիտնական եւ ուսումնական անձինք»[6]։ Թանգարանի եւ ձեռագրատան (մատենադարանի) գանձերն ուսումնասիրելու նպատակով Պետերբուրգից Էջմիածին էին այցելում Ն. Մառը, Ցա. Սմիռնովը, Ն. Ադոնցը, Վ. Բարթոլդը, Բ. Տուրաեւը, Փարիզից՝ Ա. Մէյէն ու Ֆ. Մակլէրը։ Միաբանութեան գիտնական—անդամների եւ ակադեմիական գիտութեան ներկայացուցիչների միջեւ ստեղծուել էր գիտական սերտ համագործակցութիւն եւ բարեկամութիւն, որի վկայութիւնն է նրանց միջեւ եղած նամակագրութիւնը, ինչպէս նաեւ միաբանութեան անդամներից շատերի՝ Գարեգին Յովսէփեանի, Գալուստ Տէր Մկրտչեանի, Մեսրոպ արքեպիսկոպոս Սմբատեանցի՝ կայսերական ակադեմիայի հնագիտական ընկերութեան անդամ լինելու փաստը։

Հրատարակութեան առաջին տարիներին Արարատի հնարաւորութիւնները շատ համեստ էին, աշխատակիցներ գրեթէ չունէր, յաճախ կաթողիկոսի նշանակած խմբագիրն ամբողջ համարի նիւթերի հեղինակն էր։ Դրանով է բացատրւում հանդէսի այդ տարիների գիտական ոչ այնքան բարձր մակարդակը։

70ական թուականների կէսերից աստիճանաբար ձեւաւորւում է ամսագրի գիտական բնոյթը։ 1887 թուականից սկսուեց ամսագրի վերելքի շրջանը, իսկ 90ական թուականներին այն հասաւ գիտական բարձր մակարդակի եւ իր հրապարակումներով ու հետազօտութիւններով շատ կարեւոր տեղ գրաւեց դարավերջի եւ 20րդ դարի սկզբի հայագիտական պարբերականների շարքում։

Սկզբում, մինչեւ 1872 թ. Արարատը հրատարակւում էր Մայիսից

Մայիս, որից յետոյ եւ մինչեւ վերջ շարունակւում է Ցունուարից Ցունուար։ Տաւալը մեծացաւ, արտաքին տեսքը, հրատարակութեան պայմանները բարելաւուեցին, ամսագիրը դարձաւ աւելի բովանդակալից։

Արարատը թէպէտ խմբագրուել է տարբեր մարդկանց կողմից, սակայն դա էական ազդեցութիւն չի ունեցել ամսագրի ուղղութեան վրայ։ Նրա վերջին խմբագիր Գիւտ Տէր Ղազարեանի ուսումնասիրութեան համաձայն, Արարատն ունեցել է 16 խմբագիր, որոնց մէջ եղել են նշանաւոր եւ բեղուն գիտնականներ՝ Վահրամ եպս. Մանկունին, Խորէն վրդ. Ստեփանէն, Ցուսիկ արքեպս. Տէր Մովսիսեանը, Գալուստ Տէր Մկրտչեանը, Արշակ Տէր Միքելեանը, Կարապետ եպս. Տէր Մկրտչեանը, Գարեգին կաթ. Ցովսէփեանը, Բարգէն Աղաւելեանցը, Տիրայր եպս. Տէր Ցովհաննիսեանը եւ ուրիշներ։

Ամսագրի վրայ խմբագրի անունը չէր նշւում՝ քանի որ, ինչպէս Կարապետ եպիսկոպոսն էր գրում. «Պաշտօնական թերթի համար խմբագրութեան փոփոխուիլն այն նշանակութիւնը չունի, ինչ որ մասնաւոր թերթի համար. այստեղ մի պաշտօնական մարմին, մի հաստատութիւն կայ, որ հսկում է թերթի վերայ եւ ուղղութիւն տալիս նորան, խմբագրութիւնը հաստատութեան ներկայացուցիչն է միայն, որ առաջնորդւում է տրուած ուղղութեամբ եւ ցուցումներով, եւ քանի հաստատութիւնը նոյնն է մնում, կարող է ներկայացուցիչը փոխուել, իսկ թերթը պահել իւր ուղղութիւնն ու շարունակել անսայթաք իւր ընթացքը»[7]։

Իսկապէս այդպէս էր. ամսագրի ուղղութեան վրայ խմբագրի եւ խմբագրական յանձնախմբի փոփոխութիւնը չէր ազդում, սակայն ուղղութիւնը ներկայացնելու մակարդակի վրայ այն շատ զգալի էր։ Տարբեր շրջաններում՝ ամսագրի տարբեր մակարդակներ ունենալը պայմանաւորուած է հենց դրանով։ 1868–72 թուականների Արարատը նամակների, լուրերի, հաշուետուութիւնների, բաժանորդների ցուցակների, Ճեմարանի ուսանողների ստեղծագործութիւնների ասպարէզ էր։

Վահրամ Մանկունին իր խմբագրութեան տարիներին՝ 1875–78 թուականներին, գերազանցապէս իր եւ Արէլ Մխիթարեանի յօդուածներով, ուշադրութիւն է դարձրել դաւանական, հայ–յունական, հայ–կաթոլիկ յարաբերութիւններին, ծիսական հարցերին։

1879–1885 թուականներին խմբագրութիւնը (Գր. եպս. Աղափիրեան, Ա. եպս. Դաւթեան) հրատարակում է կրօնական–բարոյախօսական յօդուածներ, հիմնականում թարգմանութիւններ ֆրանսերէնից եւ գերմաներէնից։ 80ական թուականների վերջերից արդէն ամսագրի ուղղութեան մէջ սկսեց գերիշխել գիտականը, էջմիածնի միաբանութեան կազմը համալրուեց եւրոպական կրթութիւն ստացած միաբաններով, որոնք Արարատը հասցրին մի նոր որակի։

90ական թուականներից, Ց. Տէր Մովսիսեանի, Գ. Տէր Մկրտչեանի, Կ. Տէր Մկրտչեանի, Գ. Ցովսէփեանի շնորհիւ, Արարատն էլ ունեցաւ իր գոյութեան 50ամեայ ընթացքի փայլուն շրջանը, երբ առաջադիմելով, նա հասաւ իր զարգացման բարձրակէտին. դա Խրիմեան Հայրիկի կաթողիկոսութեան ժամանակն էր՝ Կարապետ եւ Գարեգին եպիսկոպոսների խմբագրութեամբ, եւ դա Արարատի ոսկէ շրջանն էր[8]։

Ամսագրին աշխատակցում էին մեծ մասամբ միաբանութեան անդամները եւ Ճեմարանի ուսուցիչները, երբեմն էլ՝ ուսանողները։ Ամսագիրը մեծ թուով համակիրներ եւ աշխատակցողներ ունէր թէ՛ Հայաստանում եւ թէ՛ նրանից դուրս։ Հրաւիրուեցին աշխատակցելու Ն. Ակինեանը, Կ. Կոստանեանը, Ստ. Մալխասեանցը, Ն. Բիւզանդացին, Գր. Խալաթեանը, Հր. Աճառեանը եւ ուրիշներ։ Հայագէտներից շատերն իրենց աշխատանքներն առաջին անգամ հրատարակել են այս հանդէսում, եւ այդ հրապարակումների մէջ կան այնպիսիները, որոնք առայժմ գիտութեանը յայտնի են միայն Արարատի հրատարակութեամբ։ Արարատի հրատարակիչները մեծ ուշադրութիւն էին դարձնում բնագրերի (յիշատակարաններ, սեպագիր եւ վիմագիր արձանագրութիւններ, դաւանաբանական, վարքագրական յուշարձաններ, թղթեր, ուղեգրութիւններ, կոնդակներ, հրովարտակներ, նամակներ, վիճակագրական տեղեկութիւններ, կանոնական նիւթեր եւ այլն) հրատարակութեանը, քանի որ դրանց հրապարակումը առատ նիւթ էր մատակարարում թէ՛ մեր երկրի եւ թէ՛ արտասահմանի հայագէտներին։ Բնագրական առաջին հրապարակումներն առակներ, հանելուկներ, առածներ, կոնդակներ, չափածոյ ստեղծագործութիւններ, Ս. Գրքից հատուածներ էին։

Ամսագիրն ունեցաւ բաւական երկար կեանք՝ 52 տարի (1868–1919 թթ.), եւ բազմաթիւ ելեւէջներ։ Կաթողիկոսն էր նշանակում խմբագրին եւ ութ հոգուց բաղկացած խմբագրական մարմինը։ Իւրաքանչիւր խմբագիր իւրովի աշխատել է հայագիտական իմաստով հարստացնել ամսագրի բովանդակութիւնը. եւ ստեղծուել են այնպիսի բաժիններ, որոնց մէջ հրատարակուած նիւթերն այսօր էլ գիտական մեծ արժէք ունեն։ Այդպիսիք են, օրինակ Կ. Տէր Մկրտչեանի «Ցաւելուած», Ց. Տէր Մովսիսեանի «Ս. Էջմիածնի գրադարան», «Ս. Էջմիածնի արխիւ», Բ. Աղաւելեանցի «Հայկական հարց», Գ. Ցովսէփեանի «Մայր Աթոռի Դիւանից» եւ այլն։ Սակայն ամսագրի ընդգծուած հայագիտական ուղղուածութիւնը, յատկապէս վերոյիշեալ խմբագիրների օրօք, այնուամենայնիւ, ստուերում էր նրա պաշտօնական–կրօնական դերը, եւ ժամանակ առ ժամանակ ծագում էր այն միտքը, որ անհրաժեշտ է ունենալ գիտական եւ կրօնական առանձին հանդէսներ։

1907 թ., երբ Արարատի խմբագիրը Գ. Ցովսէփեանն էր, մտադրու-

թիւն կար ամսագրի կրօնական մասը դարձնելու շաբաթաթերթ, իսկ գիտական մասի համար հրատարակելու մի եռամսեայ կամ քառամսեայ հանդէս։ Խրիմեան կաթողիկոսի մահը խանգարեց այդ մտադրութեան իրականացմանը, իսկ կաթողիկոսական տեղապահ Գէորգ արքեպիսկոպոսը 1908 թ. խմբագրի պարտականութիւններից ազատեց Գ. Յովսէփեանին, պատճառաբանելով թէ Արարատ ամսագիր ընդ Ձերով խմբագրութեամբ ոչ ծառայէ նպատակի իւրում որպէս կրօնական թերթ եւ որպէս պաշտօնական բերան Ս. Էջմիածնի, թէեւ քանիցս արարեալ եմք Ձեզ նկատողութիւն։ ... Արարատ գոլով պաշտօնական ամսագիր հայրապետական Աթոռոյ սրբոյ Էջմիածնի՝ տպագրի հրամանաւ Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց կամ Տեղակալի նորին եւ պարտի բովանդակել յինքեան կրօնական–եկեղեցական, գրական բանասիրական նիւթս՝ խմբագրեալս ըստ ամենայնի համեմատ ոգւոյ Հայաստանեայց սրբոյ եկեղեցւոյ։ Ի վերջին ժամանակս Արարատ չեղեալ է յիսկական նպատակէ եւ ի կոչմանէ իւրմէ»[9]։ Իսկ Յ. Օշականը, ընդհակառակը, կարծում է, որ «Գարեգին վարդապետ ամսաթերթը պահած է իր գտած բարձրութեան վրայ։ Հոն իր յօդուածները, ինչպէս ընկերներունը հայոց բանասիրութեան ինքնին առատ մթերքին վրայ թանկագին յաւելումներ են»։ Դրանից առաջ էլ՝ 1900 թ. Յունուարից մինչեւ 1901 թ. Մայիս, նա խմբագրել էր Արարատը։ Այդ ժամանակ հանդէսի բաժիններին աւելացաւ եւս մէկը՝ «Մայր Աթոռի Դիւանից» խորագրով, որտեղ հրատարակուել են 17–19րդ դարերի պատմութեան վերաբերեալ կոնդակներ, թղթեր, յիշատակարաններ՝ Ղուկաս կաթողիկոսի կեանքի եւ գործունէութեան մասին պատմող բնագիր, եպիսկոպոս Եփրեմ Բարսեղ Արքեպիսկոպոսեանի երկու նամակները Ներսէս Աշտարակեցուն եւ այլ վաւերագրեր։ Գ. Տէր Մկրտչեանի՝ Արարատի խմբագրի պարտականութիւնների ստանձնումով 1891–1892 թթ. աւելի յստակ ու որոշակի է դառնում ամսագրի հայագիտական ուղղուածութիւնը։ Նրա հրատարակութեամբ լոյս են տեսել աղանդաւորական շարժումները լուսաբանող բնագրեր, այն ժամանակ հայագիտութեանը քիչ յայտնի հեղինակների երկեր, յիշատակարաններ, վարքեր, ծածկագրեր, որոնցից իւրաքանչիւրն առանձին վերցրած բնագրագիտական–աղբիւրագիտական ուսումնասիրութիւն է, քանի որ պարզւում է բնագրի հեղինակը, ժամանակը, տեղը, ճշդւում են պատմական իրադարձութիւնների մանրամասները։ Բացի բնագրերից, Գ. Տէր Մկրտչեանն ամսագիրը հարստացնում էր իր թարգմանութիւններով, որոնք օժտւում էին շատ արժէքաւոր ծանօթագրութիւններով։ Գ. Տէր Մկրտչեանն, որպէս խմբագրութեան անդամ եւ խմբագիր, հանդէսի արտաքին տեսքի եւ բովանդակութեան, ծաւալի, պարբերականութեան հարցերի առումով եւս մեծ եւ շնորհակալ աշխատանք էր կատարում։

1895 թ. Կարապետ Տէր Մկրտչեանը, որ նախ խմբագրական յանձնախմբի անդամ էր եւ ապա՝ (1896–1900) խմբագիր, տեղեկացնում է, որ Արարատը այս (3րդ) համարից սկսած «կ՚ունենայ իւր Ցաւելուածը, ուր կը տպագրուին հետզհետէ հատուկտորներ Մայր Աթոռի ձեռագիրներից՝ առ այժմ որքան կարելի է հնագոյն յիշատակարաններ»[10]։ Եւ, իրօք, բազմաթիւ արժէքաւոր աղբիւրներ, վաւերագրեր առաջին անգամ տպագրուել են Արարատ ամսագրում։ Դրանցից շատերն այսօր սկզբնաղբիւրի արժէք ունեն, որովհետեւ նրանց բնագրերը կորած են։ Կ. Տէր Մկրտչեանի այդ կարգի հրապարակումներից են «Իրենէոս եւ նշխարներ նորա գրուածներից», «Տիմոթէոս Էլուրոսի նորագիւտ երկը եւ նորա մի քանի նոր հատուածները նախնի հայրերից առած»։ Ե. Տէր Մինասեանի հետ համատեղ արուած այդ ուսումնասիրութիւնները մեծ հետաքրքրութիւն եւ աշխուժութիւն առաջացրին գիտական աշխարհում, իսկ Գերմանիայում հրատարակուեցին եւ վերահրատարակուեցին հայերէն բնագրերը՝ գերմաներէն զուգահեռ թարգմանութեամբ, առաջաբանով եւ ցանկերով։ Շատ արժէքաւոր են Արարատում Կ. Տէր Մկրտչեանի, Ա. Տէր Միքելեանի, Հ. Գիւլխանդանեանի հրապարակած թղթերը, որոնց համեմատութիւնը Գիրք Թղթոց ժողովածուի հետ ցոյց է տալիս, որ դրանք աւելի լիակատար եւ ճշգրիտ են, քանի որ կազմուած են ձեռագրերի համեմատութեամբ։ Թղթերի, ինչպէս նաեւ Տիմոթէոս Կուզի Հակաճառութեան եւ Յովհաննէս Իմաստասէրի Խոստովանութեան ուսումնասիրութիւնը բացառիկ կարեւորութիւն ունեն դարերի ընթացքում հայ եկեղեցու ինքնուրոյն, անկախ դիրքը պահպանելու ձգտումն ըստ արժանւոյն գնահատելու եւ հայ եկեղեցու պատմութեան ուսումնասիրութիւնը գիտական հիմքերի վրայ դնելու հարցում։

Արարատի հրապարակումների մէջ նշանակալի տեղ ունեն բանահիւսութիւնը, ուղեգրութիւնները, ձեռագրերի ուսումնասիրութիւնը։ Իրենց բանահաւաքչական–բանագիտական աշխատանքի արդիւնքն ամսագրի էջերում հրատարակել են Մ. Արեղեանը, Հ. Աճեմեանը, Հր. Աճառեանը, Խ. Դատեանը, Ց. Աւշեանը, Ս. Հայկունին, Ն. Քարամեանը, Մ. Զաքարեանցը։

Գերմանացի ճանապարհորդ բարոն Հաքստհաուզէնի ուղեգրութիւնը, որ կրում է Ճանապարհորդութիւն յայսկոյս Կովկասու, այն է ի Հայս եւ ի Վիրս խորագիրը, պարունակում է ԺԹ. դարի առաջին կէսի հայերի, վրացիների, արիազների, օսերի, գաղթական գերմանացիների կեանքի, կենցաղի, բարքերի, դաւանանքի, ծէսերի, մարդաբանական տիպի, աւանդութիւնների, ազգամիջեան փոխյարաբերութիւնների մասին ինչ որ տեղ հակասական, սակայն շատ արժէքաւոր տեղեկութիւններ։ Իր այդ արժանիքների համար ուղեգրութիւնը բազմիցս հրատարակուել եւ թարգման-

ուել է տարբեր լեզուների։ 1869 թ. այն գերմաներէնից հայերէնի է թարգմանել Արիստակէս վարդապետ Սեդրակեանը։

Ձեռագրերի աւելացման հետ մեծանում էր ձեռագրացուցակներ ունենալու անհրաժեշտութիւնը։ Ձեռագրերի նկարագրութեան անդրանիկ փորձը, 17–19րդ դարերի գրչագրերի յիշատակարանների եւ նամակների հրապարակմամբ, «Ս. Էջմիածնի գրադարան» վերնագրով, Արարատի էջերում յայտնւում է 1888 թ.։ Այնուհետեւ յաջորդում են Խ. Դատեանի, Մ. Մաքսուդեանի, Հր. Աճառեանի, Ս. Տիգրանեանի, Մ. Տէր Մովսիսեանի եւ այլոց հրապարակումները։ 1883թ. Յ. Տէր Մովսիսեանը «Ս. Էջմիածնի արխիւ» վերնագրով բաժնում հրատարակել է 19րդ դարի կաթողիկոսական ընտրութիւններին վերաբերող կարեւոր արխիւային նիւթեր՝ պատգամաւորների ցուցակներ, Սինոդի, Կովկասի փոխարքայի, Կ. Պոլսի պատրիարքի գրագրութիւնը։

Արարատի առաջին խմբագիր Արէլ եպիսկոպոս Մխիթարեանը հրատարակել է Շիրակի եւ Արարատեան դաշտավայրի յուշարձանների տեղագրական ուսումնասիրութիւնների շարք, միջնադարեան բնագրեր, հայ եկեղեցու պատմութեան դրուագներ (1870–1876 թթ.)։ Այդ ուսումնասիրութիւնները հարուստ են վիմագրերի հրապարակմամբ եւ պատմիչների հաղորդումների վկայակոչումներով։ Մեսրոպ Սմբատեանի անուան հետ է կապուած քսանից աւելի սեպագիր արձանագրութիւնների հրապարակումը՝ Պետերբուրգի համալսարանի պրոֆեսոր Ֆ. Պատկանեանի մասնակի վերծանութեամբ։ Սեպագիր արձանագրութիւններ են հրատարակել նաեւ Գ. Տէր Մկրտչեանը, Կ. Բասմաջեանը, Յ. Տէր Մովսիսեանը։ Շատ են նաեւ վիմագիր արձանագրութիւնների հրապարակումները, որոնց գիտական մակարդակն, ի հարկէ հեռու է կատարեալ լինելուց, սակայն դրանով կանխւում էր այդ սկզբնաղբիւրների անհետ կորուստը։ Արւում էին հայերէն արձանագրութիւնների ժողովածու՝ Դիւան կազմելու փորձեր, այդ մասին միմեանց հետ խորհրդակցում էին Մ. Տէր Մովսիսեանը եւ Ն. Մառը։ 1913 թ., երբ նախապատրաստւում էին հայոց գրերի գիւտի 1500 եւ տպագրութեան 400ամեայ յոբելեանները, կաթողիկոսի կոնդակով հաստատուած յոբելեանական յանձնաժողովը (Մեսրոպ Տէր Մովսիսեան, Գարեգին Յովսէփեան, Գ. Տէր Մկրտչեան, Տ. Բագրատ, Տ. Բարգէն, Ճեմարանի ուսուցիչներ՝ Մ. Արեղեան, Ստ. Կանայեան, Գ. Ալթունեան, Գ. Էդիլեան, Ռ. Աբրահամեան) ներկայացնում է եօթ կէտից բաղկացած ծրագիր, որով տօնակատարութեան ժամանակը, տեղը որոշելուց բացի, շատ կարեւոր էր համարւում ամբողջ հայութեան մէջ եկեղեցական–համազգային մի ընդհանուր ֆոնդի ստեղծումը (3րդ կէտ), հայագիտական մատենադարանի հիմնումը (4րդ կէտ), ձեռագրերի կանոնաւոր հրատարակութեան հարցը (5րդ կէտ), ինչպէս նաեւ վեցերորդ կէտը, որ նախատե-

սում էր. «...Մ. Էջմիածինը սկիզբ է դնում մի գիտական պարբերական հրատարակութեան, որի առաջին համարը պէտք է նուիրուած լինի տօնին։ ... Գիտական օրգանը թէ՝ իւր տօնական համարով եւ թէ՝ ընդհանրապէս լինելու է հայագիտական բովանդակութեամբ լայն մտքով։ Յատկապէս առաջին համարի հրատարակութեան եւ խմբագրութեան գործը կազմակերպելու համար ժողովն ընտրեց յատուկ մասնաժողով (Գ. Տէր Մկրտչեան, Գ. Յովսէփեան, Մ. Աբեղեան, Ստ. Կանայեան, Ռ. Աբրահամեան)»[11]։ Սակայն կաթողիկոսը հաստատում է որոշման միայն առաջին մասը եւ յորելեանի առթիւ լոյս է տեսնում Շողակաթ ժողովածուի մէկ հատոր։

Ամսագրի խմբագիրները քննարկուող հարցերի շատ աւելի լայն շրջանակ էին ստանձնում, քան մի կրօնական հանդէս կարող էր թոյլ տալ։ Արարատն արձագանգում էր նաեւ առօրեայ խնդիրներին. տպագրւում էին մանկավարժութեան, հոգեբանութեան, բժշկութեան, կենսաբանութեան վերաբերեալ ինքնուրոյն եւ թարգմանական աշխատանքներ, մեծ տեղ էր յատկացւում Հայկական հարցին, արեւմտահայութեան վիճակին, թուրքերի դէմ նրա հերոսական պայքարին (1894–1896 թթ. Սասունի, Զէյթունի, Վանի հերոսամարտերը)։ Եւ, բնականաբար, ինչպէս տեղեկացնում է Արարատը, հայոց կաթողիկոսն այդ դժուար օրերին պէտք է լինէր իր ժողովրդի հետ. «Այս գալիք աղէտները գուշակելով՝ ազգիս անձնուէր Հայրապետը ձմեռային դառնաչունչ օրերին ուղի ընկաւ եւ կիսամեայ ժամանակով պանդխտելով՝ հասաւ մինչեւ ռուսաց մեծազօր կայսեր պալատն, ուր սիրալիր ընդունելութիւն գտաւ եւ իւր հալածուած հօտին հովանաւորելու խնդրեց»[12]։

Սակայն, ըստ ռուսական կառավարութեան եւ նրա պաշտօնեաների համոզմունքների, ազգային–ազատագրական պայքարի այդ բռնկումները թէ՝ արեւմտահայ եւ թէ՝ արեւելահայ հատուածների կողմից ընդամէնը «խռովութիւններ» էին, որոնք վնասում էին մեծ տէրութեան շահերին եւ, հետեւաբար, պէտք է ճնշուէին։ Ներքին գործերի նախարարին ուղղուած՝ Գոլիցինի յայտնի զեկուցագրում ասւում էր. «Արարատ ամսագրի նմանօրինակ ուղղութիւնն արտայայտուեց նաեւ ներկայ պատրիարքի (Խրիմեան Հայրիկ – Կ.Ա.) օրօք, այն բանից յետոյ, երբ Զերդ գերազանցութեան կողմից, 1895 թուականի Հոկտեմբերի 31ի հ. 17 գրութեամբ առաջարկուեց նրան իր ազդեցութիւնը գործադրել ռուսահայերի եւ արտասահմանեան հայերի նկատմամբ՝ նպատակ ունենալով վերջ տալու քաղաքական խռովութիւններին Փոքր Ասիայում։ Կարծէք կանխամտածուած ձեւով, ի հակասութիւն այդ առաջարկութեան, Արարատի մի ամբողջ շարք համարներում երեւացին ծայրայեղօրէն գրգռիչ բնոյթի յօդուածներ, ուղղուած բոլոր մեծ պետութիւնների դէմ, որոնք իրենց մասնակցութիւնն են բե-

ռում խռովութիւնների խաղաղեցման գործին։ ... Ընդ որում, այս հարցում որեւէ ներգործութիւն երբեք կարելի չէ սպասել էջմիածնից, որը Պատրիարքի գլխաւորութեամբ սովորաբար հայերի համար հանդիսանում է ո՛չ այնքան կրօնական, որքան քաղաքական միասնութեան կենտրոն եւ հլու զէնք նրանց անջատողական ձգտումների համար»[13]։ 1914 թ. ամսագրի խմբագիր նշանակուեց Բարգէն վարդապետ Աղաւելեանցը։ Նա ստեղծեց «Հայկական Հարց»ի բաժին, ուր հրատարակւում էին ականատեսների յուշեր, օրագրեր, հայ, ռուս, եւրոպացի գործիչների, գրողների, հրապարակախօսների ելոյթներ, զեկոյցներ, վիճակագրական տուեալներ։ Հայ ժողովրդի համար առաջին համաշխարհայինի այդ դժուար տարիներին, երբ հարցականի տակ էր ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը, հոգ էր տարւում ձեռագրերի եւ թանգարանային հաւաքածոների պահպանութեան համար, Արեւմտեան Հայաստան ուղարկուած արշաւախմբերն էջմիածին էին տեղափոխում հաւաքուած ձեռագրերը։ 1915 թուականին Սմբատ Տէր Աւետիսեանը եւ Ե. Լալայեանը պէտք է մեկնէին Արեւմտեան Հայաստան, մասնաւորապէս Վանի շրջակայքը, հաւաքելու եւ էջմիածին տեղափոխելով կորստից փրկելու ձեռագրեր եւ նիւթական այլ արժէքներ։ Այս առիթով Ս. Տէր Աւետիսեանը կաթողիկոսի դիւանապետին գրել է, թէ որպէսզի եկեղեցական հնութիւններ հաւաքելիս ինքը խախտած չլինի եկեղեցու սեփականատիրական իրաւունքները, ցանկալի է, որ կաթողիկոսի լիազօրմամբ իրեն ընկերակցի Վան գնացած վարդապետերից մէկը, որի հետ միասին էլ իրենք կարող են հնութիւնները ցուցակագրել եւ ուղարկել էջմիածին կամ Թիֆլիսի առաջնորդարան՝ որտեղ ապահով կը համարի Մայր Աթոռը։

Կաթողիկոսը նշանակեց Լիմ անապատի վանահայր Յովհաննէս վարդապետ Հիւսեանին՝ նրան «արտօնելով եւ լիազօրելով միշտ ներկայ լինել իրերի, յիշատակարանների, եկեղեցական սպասների ու զարդերի, ձեռագրերի, կալուածական վաւերագրերի եւն. եւն. ցուցակագրութեան ժամանակ, ստանալով այդ ցուցակների վաւերական պատճէնները եւ ցուցակագրուած իրերը, եթէ որեւէ պատճառով անհրաժեշտ համարուին տեղափոխելու իրենց տեղերից ի պահպանութիւն եւ յապահովութիւն, փոխադրուին յատկապէս Մ. Աթոռս»[14]։

1916 թուականին կաթողիկոսի կարգադրութեամբ ստեղծուեց մի ուրիշ խումբ՝ Մուշ ուղարկելու համար։ Այդ արշաւախմբի մէջ էին Գիւտ Տէր Ղազարեանը, Ճեմարանի երկու ուսուցիչ եւ մի բժիշկ։ Խումբն ստացաւ 9 կէտից բաղկացած մի հետաքրքրական հրահանգ, որի համաձայն յանձնաժողովը պարտաւոր էր բանալ ժողովրդի փախուստի ժամանակ պահուած վանական եւ եկեղեցական հնութիւնների թաքստոցները, պատշաճ ձեւով ցուցակագրէր, արձանագրէր, եւ այդ ամէնը նաեւ՝ չոչնչացած

հնագիտական, ազգագրական, արուեստի եւ այլ յուշարձանները, տեղափոխէր Մայր Աթոռ. ապագայ թիւրիմացութիւններից խուսափելու համար պէտք է ձեռնպահ մնար մասնաւորներին պատկանած հնութիւնների թաքստոցները բանալուց։ Սակայն յանձնաժողովը պէտք է կազմէր նաեւ կանգուն եւ աւերուած բոլոր յուշարձանների մանրամասն ցանկեր, ժողովրդի դրութեան, քանակի եւ այլնի մասին ճշգրիտ վիճակագրական ցուցակներ, Էջմիածնի Եղբայրական օգնութեան յանձնաժողովի միջոցներով հոգար ժողովրդի ամենաանհրաժեշտ կարիքները եւ այլն[15]։

Այդ ժամանակ Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի ժողովածուն հարստացաւ Վասպուրականից եւ Մուշից բերուած աւելի քան 1600 ձեռագրով։ Արարատը մանրամասն հաշուետուութիւններ է տպագրել նաեւ նիւթական ու բժշկական այն օգնութեան մասին, որ յանձնաժողովը ցոյց է տուել տեղի բնակչութեանը։

Ի վերջոյ, բնագրական հրապարակումների մէջ կարեւոր տեղ ունեն կաթողիկոսների կոնդակները, կարգադրութիւնները, որոնք թէ՛ ոտնձգութիւններից ու յարձակումներից պաշտպանում են հայոց եկեղեցու սկզբունքներն ու իրաւունքները եւ թէ հրահանգում են տգէտ քահանաներ չձեռնադրել, ամուսնութիւնների ժամանակ սահմանուած օրէնքները պահպանել, հաստատում են դպրոցական կանոնադրութիւններ եւ ծրագրեր, տեղեկացնում հայկական դպրոցների վերաբացման եւ եկեղեցական կալուածների վերադարձման մասին, յորդորում, պահանջում նիւթական ու բարոյական օգնութիւն՝ Եղեռնից փրկուած գաղթականներին։

Հայ ժողովրդի քաղաքական եւ ընկերային–տնտեսական պատմութեան հարցերը եւս արծարծուել են Արարատի էջերում (Հ. Մուսայէլեան՝ «Անդրկովկասի հողային պայմանները», «Անդրկովկասի ազգաբնակչութիւնը», «Ճորտատիրական մնացորդների վերացումն Անդրկովկասում», «Ղարաբաղի նուաճման հարիւրամեակը»։ Գ. Ալթունեան՝ «Թաթարների արշաւանքը»։ Ց. Մանանդեան՝ «Մի դիտողութիւն հայոց ներքին կեանքի ուսումնասիրութեան վրայ»։ Ց. Օրբելի՝ «Անիի աւերակները», «Անիի պեղումները»։ Գ. Շիրմազանեանց՝ «Չինուորական հայ պաշտօնակալք ոմանք ի Պարսկաստան»։ Գ. Այվազեանց՝ «Նիկոլ եպիսկոպոս եւ պատմութիւն դարձին հայկազանց Լեհաստանի ի կաթոլիկութիւն»։ Ստ. Կանայեանց՝ «Անյայտ գաւառներ հին Հայաստանի»։ Խ. Սամուէլեան՝ «Իրաւունք եւ կրօն», «Հայ նահապետական գերդաստանը», «Հայ իրաւաբանական սիմբոլները»։ Ս. Թանդեան՝ «Լեհահայերի մասին. Եազլովէց քաղաքի պատմութիւնը»։ Գր. Տէր Պողոսեան՝ «Արմաւիրի չերքէզախօս հայերի անցեալի մասին. հայրենիքը եւ գաղթը»։ Գ. Ղազարեան՝ «Անասնապահութիւն եւ անասնաբուծութիւն», «Երկրագործական անհրաժեշտ գիտելիքներ. թէ ինչպէս պէտք է վարել հողը»)։

Շատ են թարգմանական յօդուածները. Վ. Պոտտոյի՝ Պարսկական պատերազմ 1826–28 թթ. գրքի Հայաստանին վերաբերող հատուածները, Ֆ. Լօօֆսի՝ «Հայ եկեղեցին», Վ. Բոլոտովի՝ «Եկեղեցու պատմութիւնը տիեզերական ժողովների շրջանում», Ն. Մառի՝ «Մկրտութիւն հայոց, վրաց, աբխազաց եւ ալանաց ի սրբոյն Գրիգորէ», Ֆ. Ռոսէյկինի՝ «Փոտի ջանքերը հայ եկեղեցին միացնելու Կ. Պոլսոյ կամ յունական եկեղեցուն», Պ. Միլիւկովի՝ «Փարիզի միջազգային վեհաժողովը հայկական հարցի առթիւ», Բաքսթրն եղբայրների՝ Հայոց եկեղեցին եւ Պետութեանց պարտաւորութիւնը հատուածները «Ճանապարհորդութիւն եւ քաղաքական կեանք Հայաստանի մէջ» գրքից։ Զափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ չի եղել հայ ժողովրդի կեանքի քիչ թէ շատ յիշարժան իրադարձութիւն, տօն, տարելից, որին Արարատը անդրադարձած չլինի իր հրատարակութեան տարիներին։ Դա եղել է նոր կաթողիկոսի ընտրութիւն, Ղարաբաղի նուաճման 100ամեակ, գրի եւ գրչութեան, տպագրութեան յոբելեան, Հայկական հարց, եկեղեցական կալուածների բռնագրաւում եւ վերադարձ, ազգային դպրոցների փակումն ու վերաբացումը, որ արտայայտուել է յօդուածներ, ուսումնասիրութիւններ տպելով, ցուցահանդէս կազմակերպելով, յոբելեանական հատորներ եւ գրքոյկներ հրատարակելով, ծրագրեր առաջարկելով եւ դէպքերին մասնակից դարձնելով ի սփիւռս աշխարհի ցրուած հայութեանը, որով էջմիածինը հանդիսանում էր այն հաստատութիւնը, որի շուրջ համախմբւում էր ամբողջ հայութիւնը, որովհետեւ հայ ժողովրդի պատմութիւնը նաեւ հայ եկեղեցու պատմութիւն է, եւ դրանք իրարից զատելն անհնար է։

Հայ իրականութիւնը ԺԹ. դարի վերջերին արդէն շերտաւորուած էր տարբեր հոսանքների եւ նոր ձեւաւորուած՝ հիմնականում երկրի եւ ազգի ազատագրութեան ընդհանուր նպատակ ունեցող կուսակցութիւնների շուրջ։ Մեր գրեթէ բոլոր կուսակցութիւնները, աւելի կամ պակաս չափով, ունէին մարքսական–ընկերվարական (սոցիալիստական) երանգաւորում։ Իսկ ընկերվարութիւնը, յատկապէս նրա ռուսական տարբերակը, որի ճընշող ազդեցութեամբ ձեւաւորուել էին մեր կուսակցութիւնները, ծայրայեղ դրսեւորումներով լիովին ժխտում էր կրօնը, եկեղեցին եւ եկեղեցականներին։ Եւ ահա հայկական կուսակցութիւնները, որոնք միմեանց դէմ պայքարելիս աշխատում էին ապացուցել սեփական ուղու եւ ընտրած եղանակի ճշմարտացիութիւնը, միակամ էին մի՝ հայ եկեղեցին ու եկեղեցականութիւնը քննադատելու եւ պախարակելու հարցում. չէր նկատւում մեր իրականութեան մէջ եկեղեցու ունեցած բոլորովին այլ դերն ու նկարագիրը, քան եւրոպական եւ ռուսական աշխարհում ունեցել էին կաթոլիկ եւ ուղղափառ եկեղեցիները։ Ընդհանրապէս էջմիածնի եւ Արարատի հանդէպ գոյութիւն ունէր ժխտողական, բացասական վերաբերմունք,

որին արժանանում էր Էջմիածնի անուան հետ կապուած ամէն ինչը։ Նորամոյծ գաղափարախօսութեան համար կարծես ինչը որ ազգային էր, համարւում էր նաեւ պահպանողական—կղերական։ Մինչեւ 1900ական թուականների հայ մամուլի եւ հրապարակախօսութեան թէժ պայքարի խնդիրների մէջ եկեղեցու եւ հոգեւորականութեան հարցն առաջնակարգ տեղ է բռնել։ Ցաւալին այն էր, որ քննադատներն այդ խնդրի նկատմամբ բարեացակամ չէին եւ շտկելուց աւելի՝ վարկաբեկելու նպատակ ունէին[16]։ Եւ այդ համատարած քննադատութիւնից անմասն չմնաց Արարատը։ Իրենք իրենց առաջադէմ, ժողովրդավար համարող շատ գործիչներ մամուլում անխնայ քննադատում էին Արարատ ամսագիրն ու նրա խմբագիրներին, եթէ նոյնիսկ այդ խմբագիրը լինէր Կարապետ եպիսկոպոս Տէր Մկրտչեանի նման գիտնականը, որի անունը, ինչպէս նշում է Ե. Տէր Մինասեանը, «իբրեւ եւրոպական հեղինակի, մտել է արդէն գերմանական մասնագիտական էնցիկլոպեդիայի մէջ։ Աւելի կամ պակաս չափով գիտէ նա տասն եւ մէկ լեզու, որով քրիստոնէական գիտութեան եւ հայագիտութեան վերաբերեալ ամէն տեսակ ուսումնասիրութիւններ կարող է մասնագիտօրէն կատարել, քաղաքակիրթ աշխարհի հետ հոգեւոր հաղորդակցութեան մէջ լինել եւ խօսքով ու գրով անմիջական յարաբերութիւն ունենալ գրեթէ ամէնքի հետ պաշտօնական եւ մասնաւոր հանգամանքներում։ Բոլոր հիւպատոսների հետ սրբազանը գտնւում է բարեկամական յարաբերութեանց մէջ։ ... Մի հայազգի հոգեւորական, որ իւրաքանչիւրի հետ խօսում է իւր լեզուով, առանց թարգմանի օգնութեան դիմելու»[17]։

«Արարատ»ի մասին այդ աննպաստ կարծիքը գոյութիւն ունի նաեւ հայ մամուլի պատմագրութեան մէջ. նրա՝ ըստ արժանւոյն գնահատուած չլինելու պատճառը ԺԹ. դարի վերջերի հայ մամուլում առատօրէն տպագրուած քննադատական յօդուածներն ու գրախօսութիւններն են։ Եւ ցաւալի ու զարմանալի է, որ 1903 թուականին, երբ ամսագիրն իր թիկունքին արդէն ունէր 38 տարուայ հատոր, ի թիւս որոնց Գ. Տէր Մկրտչեանի, Գ. Յովսէփեանի եւ Կ. Տէր Մկրտչեանի խմբագրածները, պատմաբան Լէօն գրում է. «Գրիգոր Արծրունին իր գործունէութեան ընթացքում շատ անգամ է կրկնել, որ 1872 թուականից ռուսահայ մամուլի համար բացուեց մի նոր շրջան, եւ Մշակը այդ շրջանի դարագլուխն է կազմում։ ...Թիֆլիսում մնաց միայն Մեղուն։ Իսկապէս դա էր ռուսահայ մամուլի միակ ներկայացուցիչը, որովհետեւ թէեւ Էջմիածնում 1868ից հրատարակւում էր Արարատ պաշտօնական ամսագիրը, բայց նա գրական եւ հրապարակախօսական արժանաւորութիւններից զուրկ մի հրատարակութիւն էր եւ առանձին, նոյն իսկ աչքի ընկնող դեր կատարել մեր մամուլի մէջ չէր կարող։ ... Էջմիածինը իր կրօնական, բարոյական, հնախօսական եւ ներբողական ժողովածուով չը պիտի ղեկավարէր ընթերցող հասարակութեան

միտքը։ Դա անհնարին բան էր։ Ուրեմն ոչ մի կերպով մեղանչած չենք լինի մեր մամուլի պատմութեան դէմ, եթէ Արարատի գոյութիւնը միանգամայն աննկատելի թողնենք»[18]։

Արարատի խմբագրութիւնը շատ յաճախ անպատասխան էր թողնում այս կարգի յարձակումները, որովհետեւ մի կողմից միաբանութեան մէջ չկար պատշաճ գիտական աստուածաբանական պատրաստութիւն ունեցող մէկը, միւս կողմից՝ ամսագիրն անպտուղ բանավէճերի ասպարէզ դարձնելը խմբագրութեան ընդունած սկզբունքին հակառակ էր։ Այդպէս էր գրեթէ մինչեւ Կ. Տէր Մկրտչեանի արտասահմանեան ուսումնառութիւնից վերադառնալը։ Դրանից յետոյ է միայն, որ Արարատում տպագրւում են յօդուածներ («Հայ հոգեւորականութեան մէջ կղերական ոգի որոնողներ», «Հարեւանցի դիտողութիւններ», «Հին ցաւ», Արարատի ընթերցողներին», «Լուրջ դիտողութիւններ», «Հակասութիւններ», «Քրիստոնէութեան իսկութիւնը»), որոնք բացատրում էին հայ եկեղեցու էութիւնը, նրա դերը, պատմական նշանակութիւնը (որ աշխատում էին նսեմացնել հակառակորդները), հոգեւորականութեան նկատմամբ գոյութիւն ունեցող սխալ վերաբերմունքը։

1918 թուականին լրացաւ Արարատի հրատարակութեան յիսնամեակը։ Յոբելեանը նշելու համար նախապատրաստական աշխատանքներ էին արւում, սակայն քաղաքական աննպաստ պայմանների պատճառով այն յետաձգուեց։ Խմբագիր Գ. Տէր Ղազարեանը կազմել էր ամսագրի նիւթերի բովանդակութեան ցանկ, որի սկիզբը հրատարակուել է Արարատում, իսկ շարունակութիւնը մնացել է անտիպ։ 1918–1919 թթ. Արարատը բացառապէս գիտական հանդէս էր. այդուհետեւ ամսագրի հրատարակութիւնը դադարեց։

Արարատի, Գէորգեան Ճեմարանի, Էջմիածնի հրատարակութիւնների շնորհիւ ստեղծուած գիտական միջավայրում եւ այդ հիմքի վրայ 1920 թուականին ստեղծուեց առաջին գիտական ինստիտուտը, որը եւ Արարատի վերջին տարիների աւանդոյթով հրատարակեց իր Գիտական նիւթերի ժողովածուն (1921–1922 թթ.)։

1968 թ. նշուեց Արարատի հիմնադրման հարիւրամեայ յոբելեանը, հրատարակուեց ամսագրի լիակատար մատենագիտութիւնը. նրա ժառանգորդ Էջմիածին ամսագրի այդ տարուայ ԺԱ.–ԺԲ. միացեալ համարները նուիրուեցին Արարատի յոբելեանին. եւ, վերջապէս, յանիրաւի արհամարհուած, ըստ էութեան՝ չհասկացուած, չընկալուած պարբերականի հասցէին հրապարակուեցին գնահատանքի խօսքեր։

Կէսդարեայ գոյութեան ընթացքում Արարատն իր կատարած դերով եզակի երեւոյթ է։ Եկեղեցու պատմութեան, մատենագրութեան, բանասիրութեան հարցերի բազմակողմանի եւ խոր ուսումնասիրութեամբ այն

արեւելահայ իրականութեան մէջ միակ լուրջ եւ առաջնակարգ գիտական ամսագիրն էր, լիովին հաւասարարժէք՝ Բազմավէպին *եւ* Հանդէս Ամսօրեայի։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հայկական ՍԱՀ Գիտութիւնների Ակադեմիա, ***Հայ Ժողովրդի Պատմութիւն***, հտ. 6, Երեւան, 1981, էջ 751։ Այսուհետեւ՝ ***Պատմութիւն***։
2. ***Հանդէս Ամսօրեայ***, Ժ. տարի, 1896, էջ 122–123։
3. Մաղաքիա Արք. Օրմանեան, ***Ազգապատում***, հտ. Գ., մասն. Բ., Երուսաղէմ, 1927, էջ 4248։
4. 1882 թ. փոխարքայութիւնը վերացուեց, ստեղծուեց Կովկասի քաղաքացիական մասի գլխաւոր կառավարչապետութիւն. տե՛ս՝ ***Պատմութիւն***, էջ 16։
5. «Անցեալի վաւերագրեր», ***Էջմիածին***, ԻԴ. տարի,, 1968, ԺԱ.–ԺԲ., էջ 104։
6. ***Արարատ***, Ի. տարի, 1887, էջ 511։
7. Կ. Տէր–Մկրտչեան, «***Արարատի*** ընթերցողներին», ***Արարատ***, Ե. տարի, 1902, էջ 493։
8. «Յիսնամեակ ***Արարատ*** ամսագրի», ***Տարազ***, ԻԸ. տարի, 1917, էջ 77։
9. ***Արարատ***, ԽԱ. տարի, 1908, էջ 959, 960։
10. ***Արարատ***, ԻԸ. տարի, 1895, էջ 82։
11. ***Արարատ***, ԽԶ. տարի, 1912, էջ 401։
12. ***Արարատ***, ԻԹ. տարի, 1896, էջ 37։
13. ***Էջմիածին***, ԻԴ. տարի, 1968, ԺԱ.–ԺԲ., էջ 104։
14. «Վանի շրջանի հնութիւնների մասին», ***Արարատ***, ԽԹ. տարի, 1915, էջ 861։
15. ***Արարատ***, Ճ. տարի, 1916, էջ 212–213։
16. Գիւտ Տէր Ղազարեանն իր ***Կարապետ եպիսկոպոսը (Տէր Մկրտչեան) իբրեւ հոգեւորական*** գրքոյկում, Էջմիածին, 1917, հանգամանօրէն անդրադարձել է տարբեր կուսակցութիւնների միմեանց, եւ բոլորի՝ հայ եկեղեցու ու հոգեւորականութեան դէմ ուղղուած այդ պայքարին։
17. Ե. Տէր Մինասեան, ***Կարապետ եպիսկոպոս Տէր Մկրտչեան***, Մոսկուա, 1911, էջ 91, 93։
18. Լէօ, ***Գրիգոր Արծրունի***, «Մշակ», հտ. 2, Թիֆլիս, 1903, էջ 25, 26։ Նկատելի է, որ այստեղ ***Արարատի*** դերը նսեմացուած է յանուն ***Մշակի***ն գերագնահատելու նպատակադրման։

Կ.Ա.

THE *ARARAT* ARMENOLOGICAL REVIEW

(Summary)

KARINE AVETIAN

The socio-political conditions of Armenia were a major reason why Armenian culture flourished outside its borders, during the decades of mid-nineteenth century.

Cultural awareness started penetrating mainland Armenia as of the sixties of the nineteenth century. Yerevan, Shushi, Van, Garin became the cradles of cultural revival in Armenia.

The Holy See of Etchmiadzin played an important role too; besides being a religious center, its position as an administrative and national center was further highlighted and enhanced through a set of innovative projects; communications with the prelacies improved, a philological review, *Ararat* started in 1868, the Gevorkian seminary was inaugurated in 1874.

In her article, the author details the story of *Ararat*: its editors, contributors, articles, and its role in promoting Armenology among Armenian and foreign scholars.

Ararat was discontinued in 1919. Its contributors and scholars constituted the core of the first scientific institute in Eastern Armenia, which was established in 1920.

Later on *Ararat* was replaced by *Etchmiadzin*, the official monthly of the Holy See.

"During the fifty years of its existence, *Ararat*'s achievements are unique. With its research articles devoted to the history of the Armenian Church, literature, philological issues, it was the leading and only serious periodical in the Eastern Armenian scholarly milieu".